

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՇԽԵՆ ՌՈՒԲԵՆԻ ՂԱՐՍԼՅԱՆ

ԳՈՐԾԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ ՈՐՊԵՍ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ

ԺԲ.00.04. - «Դատավարական իրավունք - դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

КАРСЛЯН АШХЕН РУБЕНОВНА

ПОДГОТОВКА ДЕЛА К СУДЕБНОМУ РАЗБИРАТЕЛЬСТВУ КАК СТАДИЯ
ГРАЖДАНСКОГО ПРОЦЕССА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04- “Судебное право-судоустройство, гражданский процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности”

ЕРЕВАН-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ Վ.Վ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Վ.Ա. Գուրեև

իրավաբանական գիտությունների
թեկնածու Տ.Ա. Մարկոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. փետրվարի 23-ին, ժամը 14³⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2015թ.-ի հունվարի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավ. գիտությունների դոկտոր, դոցենտ

Վ. Դ. Ավետիսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юридических наук
доцент В.В. Оганесян

Официальные оппоненты: доктор юридических наук
профессор В.А. Гуреев

кандидат юридических наук
Т.А. Маркосян

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 23-ого февраля 2015г. в 14³⁰ часов, на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 20 января 2015г.

Ученый секретарь специализированного совета,
доктор юридических наук, доцент

В.Д. Аветисян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությունն իր կարճատև գոյության ընթացքում բազմիցս ենթարկվել է էական փոփոխությունների, և այս առումով գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը բացառություն չէ: Եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ կրճատ՝ «ՔԴՕ») իր ընդունման և մոտ մեկ տասնամյակ գործողության ժամանակահատվածում բավարարվել էր գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված հատուկ նպատակներ նախատեսելով, ապա «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 28.11.2007 թվականի թիվ ՀՕ-277-Ն օրենքով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի իրավակարգավորումը ՔԴՕ-ում իրականացվեց առանձին գլխով՝ սահմանելով դատավարության այս փուլի նպատակը, ժամկետները, գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների շրջանակը և նախնական դատական նիստի ինստիտուտը:

Նման իրավակարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված էր ինչպես դատական պրակտիկայի թելադրանքով, այնպես էլ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության համակարգ միջազգային-իրավական նոր նորմերի և չափանիշների ներդրմամբ: Ի սկզբանե գործը դատաքննության նախապատրաստելու փուլի թերի իրավակարգավորումը դատական պրակտիկայում հանգեցրեց մի շարք արատավորող երևույթների, որոնք քաղաքացիական գործերը պարբերաբար հետաձգելու, գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքները խախտելու պատճառ էին հանդիսանում, բացասաբար էին անդրադառնում վարույթի կանոնավոր զարգացման, կայացվող դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության և, վերջին հաշվով, քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքներն արդյունավետ միջոցներով պաշտպանելու իրավունքի իրացման վրա: Նման երևույթներն իրենց հերթին հանգեցրին դատական ակտերի բեկանումների թվի աճի: Մյուս կողմից, Հայաստանի Հանրապետությունը, 2002 թվականի մարտին 20-ին վավերացնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի նոյեմբերի 4-ին ստորագրված եվրոպական կոնվենցիան, ստանձնեց ներպետական օրենսդրությունը Եվրոպական կոնվենցիայի և կից արձանագրությունների պահանջներին համապատասխանեցնելու պարտավորություն: Մասնավորապես, անհրաժեշտ էր սահմանել գործերի քննության՝ միջազգային չափանիշներին համապատասխանող կառուցակարգեր, որոնք կապահովեին դատական պաշտպանության, արդար դատաքննության, արդյունավետ միջոցներով իրավունքի պաշտպանություն ստանալու սահմանադրական և միջազգային-իրավական հանրաճանաչ իրավունքների իրականացումը, կնպաստեին քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացմանը:

Որպես այդպիսի կառուցակարգ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում նորովի

կանոնակարգվեց գործը դատաքննության նախապատրաստելու փուլը:

Քաղաքացիական դատավարության այս փուլի կարևորությունն իր որոշումներում բազմիցս ընդգծել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ նշելով, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը:

Այդուհանդերձ, նույնիսկ վերջին փոփոխություններով ձևավորված իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առկա իրավակարգավորումը չի կարող հաջողված համարվել, քանի որ մի կողմից որոշ դրույթների ձևակերպումները տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք են տալիս, իսկ մյուս կողմից մի շարք սկզբունքային հարցերի լուծումները դուրս են մնացել օրենսդրի ուշադրությունից:

Վերը շարադրվածը հիմնավորվում է դատական ակտերի բեկանումների ցուցանիշներով, մասնավորապես՝ իրականացված հետազոտության շրջանակներում ուսումնասիրված գործերով վերադաս դատարանի կողմից դատական ակտերի բեկանումների զգալի մասը (մոտ 35 տոկոս) պայմանավորված է գործը դատաքննության նախապատրաստելու փուլի կանոնների (օրինակ՝ ապացուցման առարկայի, վիճելի իրավահարաբերության բնույթի, կիրառման ենթակա իրավական նորմի, գործին մասնակցող անձանց կազմի) սխալ կիրառմամբ:

Այդ են վկայում նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին վերջին տարիների տարեկան զեկույցները և հատկապես 09.12.2013 թվականի արտահերթ զեկույցն արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ: Մասնավորապես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրված մարդու իրավունքների խախտումների զգալի մասը դատական իշխանության մարմինների աշխատանքի թերացումների և բացթողումների արդյունք է: Նշված զեկույցների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում շարունակում է չլուծված խնդիր մնալ արդար դատաքննության իրավունքի իրականացումը, մինչդեռ այդ իրավունքի որոշ օրգանական և ֆունկցիոնալ տարրերի լիարժեք իրացումն անմիջականորեն պայմանավորված է գործը դատաքննության նախապատրաստելու փուլով, հետևաբար որքանով կատարյալ է քաղաքացիական դատավարության այս փուլի իրավակարգավորումը, այնքանով երաշխավորված է նաև այս իրավունքի արդյունավետ իրականացումը:

Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանը ևս մի շարք որոշումներով սկզբունքային իրավական դիրքորոշումներ է արտահայտել արդար դատաքննության իրավունքի լիարժեք իրացումն ապահովելուն ուղղված կառուցակարգային երաշխիքների ստեղծման անհրաժեշտության մասին:

Այսպիսով, գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտի էությունը և նշանակությունը ժամանակակից դատավարագիտական ըմբռումներին համապատասխանեցնելու, իրավակիրառ պրակտիկայում դրա բովանդակությունը ճիշտ բացահայտելու, գործող դատավարական օրենսդրության մեջ առկա բացթողումներն ու թերությունները վերացնելու և առկա իրավակարգավորումը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան գնա-

հատելու անհրաժեշտությունն օբյեկտիվորեն արդիականություն են հաղորդում սույն հետազոտությանը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը գործը դատաքննության նախապատրաստելու փուլի տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է և դրա հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման առաջարկների մշակումը:

Նշված նպատակը ենթադրում է լուծել հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտի ծագումը և զարգացման ընթացքը Հայաստանում՝ որոշելով այս ինստիտուտի գործառնության հիմնական ուղղությունները և հեռանկարները,

- ճշգրտել և հստակեցնել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի տեղը քաղաքացիական դատավարության փուլերի համակարգում,

- բացահայտել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նպատակը և խնդիրները՝ ժամանակակից իրավական կարգավորումների համատեքստում,

- ուսումնասիրել գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների շրջանակը և գնահատել դրանց արդյունավետությունը,

- վերլուծել նախնական դատական նիստի ինստիտուտը և որոշել դրա տեղը գործը դատաքննության նախապատրաստելու փուլի շրջանակներում,

- գնահատել ձևավորված իրավակիրառ պրակտիկան և վեր հանել առկա հիմնախնդիրները,

- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել գործը դատաքննության նախապատրաստելու փուլը կարգավորող քաղաքացիական դատավարության օրենսդրության դրույթների կատարելագործման առաջարկներ՝ այդպիսով նպաստելով քննարկվող ինստիտուտի ամրապնդմանը և զարգացմանը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում գործը դատաքննության նախապատրաստելու փուլում կատարվող դատավարական գործողությունները և դրանց հետևանքով ծագող դատավարական հարաբերությունները: Որպես հետազոտության առարկա հանդես է գալիս գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը:

Գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտին վերաբերող որոշ հարցեր հետազոտության են ենթարկվել ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային մի շարք երկրների (Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի Հանրապետության, Ուկրաինայի Հանրապետության և այլն) դատավարագետների գիտական աշխատություններում: Դրանց շարքում կարելի է նշել Կ.Ս. Յուդելսոնի, Պ.Վ. Լոգինովի, Վ.Կ. Պուչինսկու, Մ.Կ. Տրեուշնիկովի, Ի.Վ. Ռեշետնիկովայի, Օ.Ն. Դիորդիևայի, Վ.Ֆ. Կովինի, Ա.Տ. Բոների, Ա.Ֆ. Կլեյմանի, Ի.Ն. Բրանտի, Յու.Կ. Օսիպովի, Դ.Մ. Չեչոտի, Գ.Ա. Ժիլինի, Յա.Խ. Բեկովի, Դ.Ի. Չակիրովայի, Ա.Վ. Շիլովի, Մ.Լ. Սկուրատովսկու, Ե.Ս. Շումեյկոյի, Դ.Գ. Ֆիլչենկոյի, Վ.Տ. Բար-

բակաձեռի, Մ.Օ. Բորոզդինայի և այլոց աշխատությունները:

Նույնը չի կարելի ասել Հայաստանի մասին: Հայ իրավաբանական գրականության մեջ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը դեռևս ուսումնասիրված չէ և դրա վերաբերյալ համընդգրկուն գիտական աշխատությունները բացակայում են: Ասվածը պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ գործը դատաքննության նախապատրաստելու ներկայիս կառուցակարգը, որը ներդրվեց քաղաքացիական դատավարությունում 2007 թվականից, բավականին ինքնատիպ է և տարբերվում է ինչպես նախկինում գոյություն ունեցածներից, այնպես էլ ժամանակակից այլ պետությունների դատավարական օրենսդրությունների համանման ինստիտուտներից:

Հետազոտության իրավական և փորձառնական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառնական հիմք են հանդիսացել գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտին առնչվող Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան նորմատիվ իրավական ակտերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ, վերաքննիչ և ընդհանուր իրավասության դատարանների դատական ակտերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Պայմանավորված հետազոտության նպատակով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկայի և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային, համեմատական-իրավական մեթոդների օգտագործմամբ:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունը հայրենական իրավագիտության առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է կատարվել բացահայտել գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտի էությունը՝ որպես արդարադատության արդյունավետության, անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացման համար պայմաններ ապահովող դատավարական կառուցակարգ:

Արդար դատաքննության իրավունքի օրգանական և ֆունկցիոնալ տարրերի բովանդակության պարզաբանման համատեքստում աշխատանքում վերլուծության են ենթարկվել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրները, հիմնավորվել է ավանդական խնդիրներից գատ նոր խնդիրների առաջադրման օբյեկտիվ անհրաժեշտությունը:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքում գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների իրավակարգավորման վերլուծության արդյունքում աշխատանքում ներկայացվել են այդ գործողությունների դասակարգման չափանիշները՝ հիմք ընդունելով դրանց բնույթը, սուբյեկտային կազմը, իրացման պայմանները: Արդյունքում ոչ միայն կատարվել են տեսական եզրահանգումներ, այլև ներկայացվել են ՀՀ օրենսդրության և իրավակիրառ դատական պրակտիկայի կատարելագործման առաջարկություններ:

Ատենախոսության գիտական նորույթն ակնհայտորեն դրսևորվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելա-

գործմանն ուղղված առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Հայաստանի քաղաքացիական դատավարությունում գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը պատմականորեն ձևավորված կատեգորիա է, և եթե զարգացման վաղ փուլերում այն հանդես էր գալիս նախ որպես գործի պատշաճ քննության և դատական խնայողության սկզբունքի ապահովմանն ուղղված իրավական կառուցակարգ, ապա ներկայիս իրավակարգավորման պայմաններում մարդու իրավունքների առաջին սերնդի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների միջազգային-իրավական ամրագրմամբ պայմանավորված՝ նաև դրանց ապահովման կառուցակարգ-երաշխիք է:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների իրավակարգավորումը թույլ է տալիս գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը դիտարկել գործառույթային (ֆունկցիոնալ) և տրամաբանական առումներով:

Գործառույթային առումով որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլ՝ գործը դատաքննության նախապատրաստելն արդարադատության արդյունավետության, անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացման համար պայմաններ ապահովող դատավարական գործողությունների և դրանց հետևանքով առաջացող իրավահարաբերությունների համակարգ է:

Զուտ տրամաբանական առումով այն պետք է դիտարկել դատական ակտերի վերանայման վարույթներում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների քննության և վերանայման ենթակա դատական ակտերի իրավաչափության արդյունավետ ստուգումն իրականացնելուն ուղղված նախապատրաստական գործողությունների միասնական ամբողջություն:

3. Արդար դատաքննության իրավունքի լիարժեք իրականացման տեսանկյունից անհրաժեշտ է ՔԴՕ-ում գործերի քննության ողջամիտ ժամկետի ապահովման իրավական երաշխիքներ սահմանել, որոնք կներառնեն նաև գործը դատաքննության նախապատրաստելու, այդ թվում նաև՝ նախնական դատական նիստ հրավիրելու և դրա անցկացման հստակ ժամկետներ: Մասնավորապես, առաջարկվում է ՔԴՕ-ում նախատեսել դրույթ այն մասին, որ գործի նախապատրաստումը դատաքննության կարող է իրականացվել գործը հարուցելու օրվանից մինչև երկամսյա ժամկետի լրանալը՝ միաժամանակ գործի բարդությամբ պայմանավորված սահմանելով այդ ժամկետի երկարաձգման կարգ՝ առավելագույնը մինչև չորս ամսով:

Բացի այդ, ՔԴՕ-ում անհրաժեշտ է նախատեսել դրույթ նաև այն մասին, որ նախնական դատական նիստ հրավիրելու հարցը դատարանը լուծում է պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան ստանալուց, իսկ այդպիսին չստանալու դեպքում պատասխան ուղարկելու համար նախատեսված ժամկետի ավարտից հետո եռօրյա ժամկետում, իսկ նախնական դատական նիստը պետք է անցկացվի այն նշանակելու մասին որոշման կայացմանը հաջորդող երկշաբաթ-

յա ժամկետում:

4. Քաղաքացիական դատավարության կարգով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ընթացակարգերի պարզեցման, դրանք ավելի արագ և մատչելի դարձնելու նպատակով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի ինքնուրույն խնդիր պետք է դիտարկել նաև քաղաքացիական գործով վարույթի ընթացքն արգելակող հանգամանքները ստուգելը և կողմերին հաշտության հանգեցնելը: Մասնավորապես, գործը դատաքննության նախապատրաստելու փուլում գործի վարույթն ավարտելու հնարավորության օրենսդրական ամրագրումն ուղղված է դատական խնայողության սկզբունքի ապահովմանը, հետևաբար անհրաժեշտ է ՔԴՕ-ում նախատեսել դրույթ, ըստ որի՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու և գործի վարույթի կարճման՝ օրենքով սահմանված հիմքերից յուրաքանչյուրի առկայության դեպքում դատարանը համապատասխանաբար հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության կամ կարճում է գործի վարույթը:

Գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հայցից հրաժարումը բացառապես նախնական դատական նիստում իրականացվող գործողությունն չէ: Այն դեպքում, երբ հրաժարումը կատարվել է գրավոր դիմումի միջոցով և դիմումի բովանդակությունից ակնհայտ է, որ հայցվորը գիտակցում է հայցից հրաժարվելու իրավական հետևանքը (գործի վարույթի կարճումը), դատարանը կարող է առանց դատական նիստ հրավիրելու եռօրյա ժամկետում կարճել գործի վարույթը: Բոլոր մյուս դեպքերում դատարանը պարտավոր է յոթնօրյա ժամկետում հրավիրել դատական նիստ և կարճել գործի վարույթը, եթե հայցվորը դատական նիստում հաստատի իր դիմումը կամ պատշաճ ծանուցված լինելով հանդերձ չներկայանա դատարան:

Միաժամանակ, առաջարկվում է ՔԴՕ-ում առանձին հոդվածով նախատեսել. «Գործը դատաքննության նախապատրաստվում է քաղաքացիական գործով վարույթի ընթացքն արգելակող հանգամանքները ստուգելու, վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը որոշելու, գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը ճշտելու և նրանց մասնակցությունն ապահովելու, գործի ըստ էության լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները որոշելու, ապացույցների կենտրոնացման, կողմերին հաշտության հանգեցնելու խնդիրների իրականացման համար»:

5. Քաղաքացիական դատավարության մրցակցային բնույթով պայմանավորված՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի բովանդակությունը կազմում են ինչպես դատարանի, այնպես էլ գործին մասնակցող անձանց՝ իրենց իրավունքների և պարտականությունների շրջանակներում իրականացվող դատավարական գործողությունները, որոնք միտված են դատավարության այս փուլի խնդիրների լուծմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարական օրենսդրությունը թույլ է տալիս գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունները դասակարգել նախնական դատական նիստում իրականացվող գործողությունների և նախնական դատական նիստից դուրս իրականացվող գործողությունների: Գործը

դատաքննության նախապատրաստելու փուլում բացառապես նախնական դատական նիստում է դատարանը կողմերին պարզաբանում նրանց իրավունքները և պարտականությունները, դատավարական գործողություններ կատարելու կամ չկատարելու հետևանքները, քննարկում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան՝ կողմերի միջև բաշխում ապացուցման պարտականությունը, ինչպես նաև սահմանում ապացույցներ ներկայացնելու ժամկետները, քննարկում ապացույցը պահանջելու վերաբերյալ միջնորդությունը, լուծում փորձաքննություն նշանակելու, դատական նիստին փորձագետներ, վկաներ կանչելու, գործի քննությանը այլ անձանց ներգրավելու, ոչ պատշաճ կողմին փոխարինելու, մի քանի պահանջների միացման և առանձնացման, արտագնա դատաքննության անցկացման հնարավորության հարցերը, որոշում ապացույցների հետազոտման կարգը:

Առաջարկվում է ՔԴՕ-ում կատարել համապատասխան փոփոխություն և նախատեսել, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլը պարտադիր է բոլոր քաղաքացիական գործերով: Միաժամանակ կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների ապահովման նկատառումով անհրաժեշտ է սահմանել, որ հայցային վարույթի կարգով քննվող գործերով դատարանը պարտավոր է, իսկ հատուկ վարույթի կարգով քննվող գործերով կարող է հրավիրել նախնական դատական նիստ:

6. Գործը պատշաճ կերպով դատաքննության նախապատրաստելու անհրաժեշտությամբ պայմանավորված որոշ դատավարական իրավունքների իրացման հնարավորությունը պետք է սահմանափակել դատավարության այս փուլի շրջանակներով: Առաջարկվում է ՔԴՕ-ի 96-րդ հոդվածի 1-ին մասը փոփոխել և շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Պատասխանողն իրավունք ունի մինչև գործով դատաքննություն նշանակելը հակընդդեմ հայց հարուցել ընդդեմ հայցվորի՝ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հակընդդեմ հայցը հարուցելու հիմքն ի հայտ է եկել դատաքննության փուլում»:

Միաժամանակ առաջարկվում է սահմանափակել հայցվորի կողմից հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու հնարավորությունը մինչև առաջին ատյանի դատարանում դատաքննություն նշանակելը՝ վերացնելով ՔԴՕ 32-րդ հոդվածի 1-ին մասի և ՔԴՕ 149⁷ հոդվածի 1-ին մասի միջև առկա հակասությունը:

7. Իրավակարգավորման ներկայիս պայմաններում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առանցքային տարրը նախնական դատական նիստն է, որն ապահովում է դատավարության այս փուլի հիմնական խնդիրների լուծումը, հետևաբար նախնական դատական նիստում գործի քննությանը նոր անձ ներգրավելու դեպքում այդ անձի դատավարական իրավունքներն ապահովելու, գործը դատաքննության պատշաճ նախապատրաստելու նկատառումով օրենսգրքում պետք է ամրագրվի այդ հիմքով նախնական դատական նիստը հետաձգելու հնարավորություն:

Բացի այդ՝ ՔԴՕ-ի 149⁸ հոդվածը պետք է հղում պարունակի «Դատաքննութ-

յունը» վերտառությամբ ՔԴՕ-ի 18-րդ գլխով սահմանված ընդհանուր կանոններին:

ՔԴՕ-ի 149⁸ հոդվածն անհրաժեշտ է լրացնել հետևյալ բովանդակության. «Ըստ անհրաժեշտության՝ դատարանը կարող է հրավիրել մեկից ավելի նախնական դատական նիստ»:

8. Առաջարկվում է կանոնակարգել վերադաս (վերաքննիչ կամ վճռաբեկ) դատարանի կողմից բեկանված մասով գործն առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու դեպքում գործը դատաքննության նախապատրաստելու դատավարական կարգը: Մասնավորապես, անհրաժեշտ է սահմանել, որ առաջին ատյանի դատարանում բեկանված մասով գործի նոր քննության ընթացքում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործողությունները պետք է իրականացվեն վերադաս դատական ատյանի կողմից գործի փաստական և իրավական հանգամանքների վերաբերյալ արտահայտած դիրքորոշման շրջանակներում՝ բացառելով նոր ապացույց ներկայացնելու հնարավորությունը, եթե դա պայմանավորված չէ դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելիս նոր փաստ ապացուցելու անհրաժեշտությամբ՝ միաժամանակ սահմանափակելով նաև հայցի առարկան կամ հիմքը փոխելու և հակընդդեմ հայց հարուցելու հնարավորությունը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների տեսական նշանակությունն ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտի ուսումնասիրությանը նվիրված առաջին համալիր աշխատանքը հայ իրավագիտության մեջ: Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան որևէ կերպ առնչվում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլի հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրությանը:

Հիմնախնդրի առնչությամբ կատարված ուսումնասիրությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության ժամանակ, ինչպես նաև նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնում: Ատենախոսությունում արտացոլված եզրահանգումները, հիմնադրույթները և առաջարկությունները համամասնորեն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված թվով 5 գիտական հոդվածներում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, որոնք ներառում են 9 պարագրաֆ, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ինչպես նաև հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխի վերտառությունն է «**Գործը դատաքննության նախապատրաստելու իրավական բնութագիրը և հիմնախնդիրները**», որը բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆը՝ «**Գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտի ծագման և զարգացման համառոտ պատմությունը Հայաստանում**» վերտառությամբ, նվիրված է Հայաստանում գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտի ծագմանը և զարգացմանը, ՀՀ-ում այս ինստիտուտի ներկա իրավակարգավորման առանձնահատկություններին:

Միջնադարյան հայ իրավունքի աղբյուրների (Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքերը) վկայակոչմամբ հեղինակը հիմնավորում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտի առանձին տարրերը հայ իրականությունում ի հայտ են եկել դեռևս 10-13-րդ դարերում: Հաջորդող դարաշրջաններում՝ մինչև 19-րդ դարը, պետականության կորստով պայմանավորված, հայ իրավական միտքն առավելապես զարգացել է հայկական գաղթօջախներում: Նշվածի վառ ապացույցն է «Աստրախանի Հայոց Դատաստանագիրքը», որը, թեև անուղղակիորեն, նախատեսում էր գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված որոշ գործողություններ: Գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտի առաջին նորմատիվ իրավակարգավորումն իրականացվել է Կայսերական Ռուսաստանում 1864 թվականին ընդունված Քաղաքացիական դատավարության կանոնագրքով, որը կիրառվում էր նաև Արևելյան Հայաստանի քաղաքացիական դատավարությունում, իսկ հետագայում՝ 20-րդ դարի սկզբին, պետականության հռչակմամբ նաև Հայաստանի առաջին Հանրապետությունում: Կանոնագրքի շուրջ 13 հոդվածներ (312-325-րդ հոդվածներ) հանգամանալից կարգավորում էին մրցակցային փաստաթղթերի (հայցադիմումի պատասխան, հայցադիմումի պատասխանի առարկություններ)՝ դատարան ներկայացնելու կարգը և ժամկետները, սահմանում էին գործը դատաքննության նշանակելու ժամկետները, կողմերին դատարան հրավիրելու կարգը՝ պարտավորեցնելով վերջիններիս մինչև դատաքննությունը ներկայանալ դատարան՝ հայցի կամ դրա դեմ ներկայացված առարկությունների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացնելու համար:

Չնայած ԽՍՀՄ իշխանությունն ամբողջովին հրաժարվեց Կայսերական Ռուսաստանում գործող օրենսդրությունից և դատավարական որոշ ինստիտուտներից, այդ թվում նաև՝ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտից, սակայն կարճ ժամանակ անց, դատական պրակտիկայի թելադրանքով պայմանավորված, օրենսդրորեն վերականգնեց այն: Ավելին, որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն և պարտադիր փուլ՝ գործը դատաքննության

նախապատրաստելը կայացավ խորհրդային իրականությունում:

Անդրադառնալով ՀՀ-ում գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտի ներկա իրավակարգավորմանը և վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը՝ հեղինակը հիմնավորում է, որ ՔԴՕ-ն թեև իր ընդունման պահին առանձին գլխով չէր իրականացրել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի իրավակարգավորումը, այդուհանդերձ, գործող դատավարական օրենսգրքի ընդունման և մոտ 10 տարվա կիրառության ժամանակահատվածում գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողություններ նախատեսված եղել են դատավարական օրենքով և իրականացվել են դատական պրակտիկայում: Այլ հարց է, որ դատավարության այս փուլը, ՀՀ քաղաքացիական դատավարության համակարգ միջազգային իրավական նոր չափանիշների ներդրմամբ պայմանավորված, 2007 թվականին ՔԴՕ-ում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում հիմնովին ենթարկվեց նոր իրավակարգավորման: Հեղինակը, վերլուծելով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի դերն անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացման հարցում, հիմնավորում է, որ դատավարության այս փուլի ներկա իրավակարգավորումը բխում է անձի վկայակոչված իրավունքներից և ուղղված է վերջիններիս լիարժեք և արդյունավետ իրացման ապահովմանը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆը՝ **«Գործը դատաքննության նախապատրաստելու փուլի հասկացությունը և տեղը քաղաքացիական դատավարության փուլերի համակարգում»** վերտառությամբ, նվիրված է քաղաքացիական դատավարության փուլերի համակարգում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի տեղի բացահայտմանը և դատավարության այս փուլի հասկացության սահմանմանը:

Հեղինակն անդրադառնում է քաղաքացիական դատավարության փուլերի համակարգում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի տեղի և դերի հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականությունում առկա երկու հիմնական տեսություններին: Առաջին տեսության համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելը քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլ չէ, քանի որ դատավարության այս փուլը չի ավարտվում վերջնական իրավակիրառ ակտի ընդունմամբ, և դատավարության այս փուլում արդարադատության ինքնուրույն նպատակ չի իրացվում: Երկրորդ տեսության կողմնակիցները, դատավարության փուլը սահմանելով որպես դատավարական գործողությունների և հարաբերությունների համակցություն՝ ուղղված մեկ մոտակա (միասնական) նպատակի իրականացմանը, հիմնավորում են դատավարության այս փուլի ինքնուրույնությունը՝ վկայակոչելով ինքնուրույն նպատակի, խնդիրների առկայությունը, դրանց լուծմանն ուղղված դատավարական գործողությունների համակարգը և այդ գործողությունների իրականացման արդյունքում դատավարական իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հնարավորությունը: Ատենախոսը, վերը նշված տեսությունների լույսի ներքո վերլուծելով ՔԴՕ-ի իրավակարգավորումը, հիմնավորում է, որ ՀՀ-ում քաղաքացիական

դատավարության փուլերի համակարգում գործը դատաքննության նախապատրաստելն ամրագրված է որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլ: Միաժամանակ հեղինակը գտնում է, որ ՔԴՕ-ում գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների իրավակարգավորումը թույլ է տալիս դատական ակտերի վերանայման վարույթներում ևս առանձնացնել վերաքննիչ կամ վճարեկ բողոքների քննության և վերանայման ենթակա դատական ակտերի իրավաչափության արդյունավետ ստուգումն իրականացնելուն ուղղված նախապատրաստական գործողությունների համակարգ:

Փաստելով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի ինքնուրույնությունը և հաշվի առնելով դատավարության այս փուլի նշանակությունը դատավարության կանոնավոր ընթացքն ապահովելու, անձի սահմանադրական և միջազգային իրավունքի նորմերով հռչակված այնպիսի իրավունքների իրացման հարցում, ինչպիսին են՝ դատական պաշտպանության, արդար դատաքննության, արդյունավետ միջոցներով իրավունքի պաշտպանություն ստանալու իրավունքները, հեղինակն առաջարկում է քաղաքացիական դատավարության կարգով քննվող բոլոր գործերով գործը դատաքննության նախապատրաստելն ամրագրել որպես քաղաքացիական դատավարության պարտադիր փուլ:

Արդյունքում գործը դատաքննության նախապատրաստելու փուլը հեղինակի կողմից բնորոշվում է որպես արդարադատության արդյունավետության, անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացման համար պայմաններ ապահովող դատավարական գործողությունների և դրանց հետևանքով առաջացող իրավահարաբերությունների համակարգ:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ **«Գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նպատակը և խնդիրները»** վերտառությամբ, արդարադատության արդյունավետության և արդար դատաքննության իրավունքի համատեքստում ներկայացվում են դատավարության այս փուլի նպատակը և խնդիրները:

Ատենախոսը փաստում է, որ ժամանակակից իրավական զարգացումներին համահունչ գործը դատաքննության նախապատրաստելու փուլը ձեռք է բերել որոշակի նոր նշանակություն, ինչն առաջնահերթ արտահայտվել է դատավարության այս փուլի նպատակի օրենսդրական ձևակերպման հարցում: ՔԴՕ-ն, ի տարբերություն նախկին իրավակարգավորման, առավել լայն է սահմանել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նպատակը՝ ամրագրելով, որ գործը դատաքննության է նախապատրաստվում դրա արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով: Արդարադատության արդյունավետության գաղափարի համատեքստում դիտարկելով և վերլուծելով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի օրենսդրական նպատակը՝ հեղինակը հիմնավորում է, որ գործը դատաքննության է նախապատրաստվում ողջամիտ ժամկետում գործի քննության, օրինական և հիմնավորված դատական ակտ կայացնելու, դատական խնայողության ապահովման նպատակով:

Անդրադառնալով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրներին՝ հեղինակը գտնում է, որ դատավարության այս փուլի խնդիրներն անմիջականորեն պայմանավորված են վերջինիս նպատակով և ուղղորդում են

դատարանի ու կողմերի, գործին մասնակցող այլ անձանց՝ գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունները: Հեղինակը պայմանականորեն առանձնացնում է դատավարության այս փուլի ավանդական խնդիրները և դրանցից յուրաքանչյուրը դիտարկում ու վերլուծում արդար դատաքննության իրավունքի օրգանական և ֆունկցիոնալ տարրերի ապահովման ընթացակարգում: Ատենախոսը միաժամանակ հիմնավորում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլի այնպիսի նոր խնդիրների օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչպիսին են՝ քաղաքացիական գործով վարույթի ընթացքն արգելակող հանգամանքները ստուգելը և կողմերին հաշտության հանգեցնելը:

Անդրադառնալով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրների իրավակարգավորմանը՝ փաստվում է, որ ՔԴՕ-ն չի նախատեսում դատավարության այս փուլի խնդիրները, իսկ որոշ խնդիրների դեպքում խնդիր և գործողություն հասկացություններն անհարկի նույնացնում է: Ատենախոսի կողմից առաջարկվում է առանձին հողվածով ՔԴՕ-ում ամրագրել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրները:

Երկրորդ գլխի վերտառությունն է **«Գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունները ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններում»**, որը բաղկացած է չորս պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ **«Գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների հասկացությունը»** վերտառությամբ, տրվում է գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների բնորոշումը՝ վերլուծելով այդ գործողությունների բնույթը և սուբյեկտային կազմի առանձնահատկությունները:

Ատենախոսը հիմնավորում է, որ եթե նախկին իրավակարգավորման պայմաններում գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունները բացառապես իրականացվում էին դատարանի կողմից, քանի որ դատարանը պարտավոր էր չսահմանափակվել գործով ներկայացված նյութերով ու բացատրություններով և ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ բազմակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվ կերպով գործի իրական հանգամանքները պարզելու համար, ապա ներկա իրավակարգավորման պարագայում, դատավարության մրցակցային բնույթով պայմանավորված, գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողություններն իրականացվում են ինչպես դատարանի, այնպես էլ կողմերի և գործին մասնակցող այլ անձանց կողմից: Գործող դատավարական օրենքը, ապացուցման պարտականությունը դնելով գործին մասնակցող անձանց վրա, վերջիններիս ընձեռել է լայն դատավարական իրավունքներով, որոնք հատկապես դրսևորվում են գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

Անդրադառնալով գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների բնույթին՝ հեղինակը ներկայացնում է նշված խնդրի վերաբերյալ մասնագիտական գրականությունում առկա երկու հիմնական մոտեցումները: Տեսակետներից առաջինի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունները գուտ տեխնիկական բնույթի գոր-

ծողություններ են: Նման մոտեցման կողմնակիցներն իրենց դիրքորոշումը հիմնավորում են՝ վկայակոչելով գործը դատաքննության նախապատրաստելու՝ քաղաքացիական դատավարության փուլ չհանդիսանալու փաստարկը: Երկրորդ տեսակետի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունները դատավարական բնույթի գործողություններ են, քանի որ ունեն նպատակաուղղված բնույթ, բխում են դատավարության այս փուլի նպատակից, խնդիրներից, իրականացվում են դատարանի լիազորությունների և գործին մասնակցող անձանց՝ նորմատիվ ամրագրված իրավունքների և պարտականությունների շրջանակներում, որոշակի հաջորդականությամբ, օրենքով կամ դատարանի կողմից սահմանված ժամկետների պահպանմամբ, ստանում են դատավարական ամրագրում: Ատենախոսը, համեմատական վերլուծության ենթարկելով վերը նշված տեսակետները, հիմնավորում է երկրորդ տեսակետի առավելությունը և համապատասխանությունը գործող դատավարական օրենքի կարգավորմանը:

Արդյունքում հեղինակի կողմից տրվում է գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների հետևյալ բնորոշումը. գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունները դատարանի, կողմերի, գործին մասնակցող այլ անձանց՝ քաղաքացիադատավարական օրենսդրությամբ ամրագրված դատավարական գործողություններն են, որոնք անմիջականորեն պայմանավորված են դատավարության այս փուլի խնդիրներով, ուղղված են դատարանի լիազորությունների և գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների իրացմանը, դատավարական հարաբերություններ առաջացնելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ **«Գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների իրավակարգավորման հիմնախնդիրները և դասակարգման հիմքերը ՀՀ քաղաքացիական դատավարությունում»** վերտառությամբ, պարզաբանվում են գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների՝ ՔԴՕ-ի իրավակարգավորման հիմնախնդիրները, ինչպես նաև ներկայացվում են այն հիմքերը, ըստ որոնց՝ այդ գործողությունները ենթակա են դասակարգման:

Հիմք ընդունելով գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների պարտադիր կամ հայեցողական բնույթը՝ հեղինակը նշված գործողությունները դասակարգում է պարտադիր գործողությունների, որոնք իրականացվում են բոլոր գործերով՝ առանց որևէ բացառության (դրանց իրականացումը դատարանի բացարձակ պարտականությունն է), և ոչ պարտադիր կամ ֆակուլտատիվ գործողությունների, որոնք իրականացվում են դատարանի հայեցողությամբ՝ ելնելով վարույթի տվյալ տեսակի առանձնահատկություններից, վիճելի իրավահարաբերության բնույթից և գործի փաստերից, ապացուցման բարդությունից, կողմերի փաստարկների վիճելիության աստիճանից և այլ հանգամանքներից: Վերլուծելով ՔԴՕ-ի իրավակարգավորումը՝ հեղինակը փաստում է, որ օրենսդիրը որպես գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված պարտադիր գործողություն նախատեսել է հայցադիմումի և կից փաստաթղթերի

պատճենները պատասխանողին ուղարկելը և նրան նախազգուշացնելը սահմանված ժամկետում հայցադիմումի պատասխան և առարկությունները հիմնավորող ապացույցներ ներկայացնելու վերաբերյալ: Կարևորելով միասնական դատական պրակտիկայի ապահովման անհրաժեշտությունը՝ հեղինակն առաջարկում է որպես գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողություն նախատեսել նաև գործը դատաքննության նախապատրաստելու մասին որոշման կայացումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների իրավակարգավորումը թույլ է տալիս գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունները դասակարգել նաև գործողություններ, որոնք իրականացվում են նախնական դատական նիստից դուրս և գործողություններ, որոնք իրականացվում են նախնական դատական նիստում: Հեղինակը խնդրահարույց է համարում նախնական դատական նիստում իրականացվող գործողությունների իրավակարգավորումը: Մասնավորապես, հեղինակը հիմնավորում է, որ դատարանը նախնական դատական նիստում պետք է պարզի ոչ միայն հայցի հիմքն ու առարկան, այլև պատասխանողի կողմից առարկություն ներկայացվելու դեպքում նաև առարկության հիմքում ընկած փաստերը և իրավական նորմերը: Ատենախոսը կարևորում է նաև նախնական դատական նիստում ապացուցման պարտականությունը բաշխելիս դրա ձևակերպման հարցը՝ որպես խնդրի լուծման տարբերակ առաջարկելով կայացնել առանձին ակտի ձևով համապատասխան որոշում և այն ուղարկել գործին մասնակցող անձանց: Քննարկելով նախնական դատական նիստում լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն նշանակելու հարցը՝ հեղինակը հիմնավորում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում կարող է նշանակվել ինչպես լրացուցիչ, այնպես էլ կրկնակի փորձաքննություն: Նախնական դատական նիստում իրականացվող մեկ այլ գործողության իրավակարգավորման կապակցությամբ էլ հեղինակը գտնում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում դատարանը, պարզելով գործին մասնակցող անձանց շրջանակը, պետք է իրավասու լինի քննարկել և լուծել վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձին (անձանց) վարույթից հեռացնելու հարցը, եթե վերացել են վերջինիս ներգրավման հիմքերը կամ նշված անձը գործի վարույթ է ներգրավվել սխալմամբ (գործող իրավակարգավորման պայմաններում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձանց զգալի մասը գործի վարույթ է ներգրավվում հայցվորի կողմից դատարան ներկայացված հայցադիմումով, որպիսի պարագայում քիչ չեն այն դեպքերը, երբ հայցվորը սխալ պատկերացում ունի գործին մասնակցող անձանց շրջանակի վերաբերյալ): Նման անհրաժեշտությունն ուղղակիորեն բխում է դատական խնայողության սկզբունքից և կոչված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը:

Ատենախոսն առաջարկում է գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունները դասակարգել նաև ըստ սուբյեկտային կազմի: Նման դասակարգման համաձայն՝ տարբերակվում են դատարանի կողմից իրականաց-

վող գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողություններ և գործին մասնակցող անձանց մասնակցությամբ իրականացվող գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողություններ: Ատենախոսը փաստում է, որ ՔԴՕ-ն չի կանոնակարգել գործը դատաքննության նախապատրաստելու փուլին գործին մասնակցող անձանց մասնակցության ձևաչափը և նրանց կողմից իրականացվող գործողությունների շրջանակը այն պարագայում, երբ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը կոչված է խթանել գործին մասնակցող անձանց դատավարական ակտիվությունը: Այնուամենայնիվ, ՔԴՕ-ի վերլուծությունից առանձնացնելով գործին մասնակցող անձանց մասնակցությամբ իրականացվող գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված մի շարք գործողություններ՝ հեղինակն առաջարկում է դրանցից որոշների (հայցի հիմքն ու առարկան փոխելու, հակընդդեմ հայց հարուցելու) իրականացման հնարավորությունը սահմանափակել դատավարության այս փուլի շրջանակներով՝ այդպիսի սահմանափակումը հիմնավորելով վարույթի կանոնավոր ընթացքն ապահովելու, գործի արդյունավետ քննությունը երաշխավորելու անհրաժեշտությամբ:

Պարագրաֆում կարևորվել է նաև վերադաս (վերաքննիչ կամ վճռաբեկ) դատարանի կողմից բեկանված մասով գործն առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու դեպքում գործը դատաքննության նախապատրաստելու սահմանների հարցը: Նշված խնդիրը դիտարկելով վերադաս՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների լիազորությունների համատեքստում՝ հեղինակը գտնում է, որ առաջին ատյանի դատարանում բեկանված մասով գործի նոր քննության ընթացքում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործողությունները պետք է իրականացվեն վերադաս դատական ատյանի կողմից գործի փաստական և իրավական հանգամանքների վերաբերյալ արտահայտած դիրքորոշման շրջանակներում՝ բացառելով նոր ապացույց ներկայացնելու հնարավորությունը, եթե դա պայմանավորված չէ դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելիս նոր փաստ ապացուցելու անհրաժեշտությամբ, միաժամանակ սահմանափակելով նաև հայցի առարկան կամ հիմքը փոխելու և հակընդդեմ հայց հարուցելու հնարավորությունը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ **«Նախնական դատական նիստը»** վերտառությամբ, անդրադարձ է կատարվել նախնական դատական նիստի հասկացության սահմանման խնդրին, այս ինստիտուտի անհրաժեշտության, պարտադիր կամ ոչ պարտադիր լինելու և մի շարք այլ ընթացակարգային հարցերի:

Հեղինակը փաստում է, որ գործող իրավակարգավորման պայմաններում նախնական դատական նիստը գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առանցքային տարրն է, որն ապահովում է դատավարության այս փուլի հիմնական խնդիրների լուծումը, գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների զգալի մասի իրականացումը: Վերլուծելով մասնագիտական գրականությունում նախնական դատական նիստի հասկացության սահմանման վերաբերյալ տարբեր տեսակետները՝ արդյունքում հեղինակը նախ-

նական դատական նիստը բնորոշում է որպես գործը դատաքննության նախապատրաստելու այնպիսի իրավական կառուցակարգ, որն ապահովում է դատավարության մասնակիցների անմիջական ներգրավվածությամբ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի հիմնական խնդիրների լուծումը, գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների զգալի մասի իրականացումը:

Նկատի ունենալով, որ գործող իրավակարգավորման պայմաններում գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների զգալի մասը կարող է իրականացվել բացառապես նախնական դատական նիստում՝ կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների ապահովման նկատառումով ատենախոսն առաջարկում է հայցային վարույթի կարգով քննվող գործերով վերացնել դատարանի՝ նախնական դատական նիստ հրավիրելու հայեցողական լիազորությունը:

Անդրադառնալով նախնական դատական նիստի անցկացման՝ ՔԴՕ-ի իրավակարգավորմանը՝ հեղինակը հիմնավորում է վերջինիս տեխնիկապես թերի լինելը: Մասնավորապես, փաստվում է, որ օրենսդիրը չի կանոնակարգել ընդհանուր բնույթի այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ նախնական դատական նիստի անցկացման կարգը, դատավորների ինքնաբացարկը, դատական սանկցիաների կիրառումը: Ատենախոսն առաջարկում է ՔԴՕ 149⁸ հոդվածում հղում նախատեսել ՔԴՕ-ի «Դատաքննությունը» վերտառությամբ 18-րդ գլխով սահմանված ընդհանուր կանոններին: Միաժամանակ ատենախոսի կողմից հիմնավորվում է մեկից ավելի նախնական դատական նիստ հրավիրելու և նշված հարցն օրենսդրոքեն կարգավորելու անհրաժեշտությունը:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «**Քաղաքացիական գործի վարույթի ավարտը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում**» վերտառությամբ, քննարկվում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլում քաղաքացիական գործի վարույթն ավարտելու հնարավորության հարցը:

Վերլուծելով ՔԴՕ-ի իրավակարգավորումը՝ ատենախոսը փաստում է, որ դատարանը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում կարող է կարճել գործի վարույթը՝ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու կամ կողմերի կնքած հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքերով:

Անդրադառնալով նշված հիմքերից յուրաքանչյուրին և հետազոտելով դատական պրակտիկան՝ հեղինակը հիմնավորում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հայցից հրաժարումը բացառապես նախնական դատական նիստում իրականացվող գործողությունն չէ: Ատենախոսը գտնում է, որ վերը նշված գործողության իրականացումը բացառապես նախնական դատական նիստ տեղափոխելը չի բխում արդարադատության արդյունավետության, մասնավորապես՝ դատական խնայողության սկզբունքից, քանի որ կարող է ոչ միայն անհարկի ձգձգել գործի քննության ավարտը (օրինակ՝ երբ կողմերից մեկը չի ծանուցվում), այլև հանգեցնել դատավարական միջոցների (դատարանի ժամանակի, աշխատանքային և նյութական ռեսուրսների) չարդարացված վատմանը: Առաջարկվում է խնդրի լուծման հետևյալ տարբերակը. գործը դատաքննության նա-

խապատրաստելու փուլում հայցից հրաժարվելու մասին դիմում ստացվելու դեպքում դատարանը կարող է առանց դատական (այդ թվում՝ նախնական) նիստ հրավիրելու եռօրյա ժամկետում կարճել գործի վարույթը, եթե դիմումի բովանդակությունից ակնհայտ է, որ հայցվորը գիտակցում է հայցից հրաժարվելու իրավական հետևանքը (գործի վարույթի կարճումը): Բոլոր մյուս դեպքերում դատարանը պարտավոր է յոթնօրյա ժամկետում հրավիրել դատական նիստ և կարճել գործի վարույթը, եթե հայցվորը դատական նիստում հաստատի իր դիմումը կամ պատշաճ ծանուցված լինելով հանդերձ չներկայանա դատարան:

Անդրադառնալով երկրորդ հիմքին՝ ատենախոսը նշում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հաշտության համաձայնություն կնքվելու դեպքում դատարանը չի կարող առանց նախնական դատական նիստ հրավիրելու կարճել գործի վարույթը, քանի որ օրենսդիրն իմպերատիվ կերպով պարտավորեցնում է դատարանին մինչ հաշտության համաձայնությունը հաստատելը կողմերին պարզաբանել դրա դատավարական հետևանքները, ինչը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հնարավոր է բացառապես նախնական դատական նիստում:

Շեղինակը նաև առաջարկում է չսահմանափակվել վերը նշված հիմքերով և գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու և գործի վարույթի կարճման՝ օրենքով սահմանված հիմքերից յուրաքանչյուրի առկայության դեպքում նախատեսել համապատասխանաբար հայցը կամ դիմումը առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու հնարավորություն:

Երրորդ գլխի վերտառությունն է «Նախապատրաստական գործողությունների օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները դատական ակտերի վերանայման վարույթներում», որը բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Նախապատրաստական գործողությունները վերաքննության և վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման վարույթներում» վերտառությամբ, ներկայացվում են վերանայման այս վարույթների նախապատրաստական մասի հատուկ խնդիրները և այդ խնդիրների լուծմանն ուղղված դատավարական գործողությունները, քննարկվում է վերանայման այս վարույթներում նախնական դատական նիստ հրավիրելու հնարավորության հարցը:

Նախ և առաջ հեղինակը հիմնավորում է դատական ակտերի վերանայման վարույթներում նախապատրաստական գործողությունների անհրաժեշտությունը՝ այդ գործողությունները միաժամանակ դիտարկելով որպես անձի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի և արդարադատության արդյունավետության ապահովման իրավական երաշխիք:

Դատական ակտերի վերանայման վարույթների նախապատրաստական մասի նպատակը բողոքի ժամանակին և ճիշտ քննության ու լուծման ապահովումն է առաջին իսկ դատական նիստում: Նշված նպատակն իր հերթին պայմանավորում է վերանայման վարույթների նախապատրաստական մասի հատուկ խնդիրները և այդ խնդիրների լուծմանն ուղղված դատավարական գործողությունների հա-

մակցությունը:

Անդրադառնալով վերանայման վարույթների նախապատրաստական մասի հատուկ խնդիրներին՝ հեղինակը նշում է, որ այդ խնդիրներն անհրաժեշտ է դիտարկել վերաքննիչ և վճռաբեկ վարույթների ընդհանուր խնդիրների համատեքստում՝ միաժամանակ հաշվի առնելով վերաքննության տեսակը: Մասնավորապես, լրիվ վերաքննության դեպքում վերաքննության նախապատրաստվում է առաջին ատյանի դատարանում քննված գործը, հետևաբար լրիվ վերաքննության տեսակի նկատմամբ կիրառելի են առաջին ատյանի դատարանում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործողությունները՝ օրենքով նախատեսված որոշակի սահմանափակումներով (վեճերը միջնորդ դատարանի լուծմանը հանձնելու, անպատշաճ կողմը փոխարինելու, հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հայցային պահանջների չափը փոփոխելու, հայցից հրաժարվելու, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող կամ չներկայացնող երրորդ անձանց՝ գործի մեջ մտնելու, հակընդդեմ հայց հարուցելու սահմանափակումներ): Լրիվ վերաքննության պարագայում նախապատրաստական գործողություններն ուղղակիորեն նախատեսված չեն դատավարական օրենքով: Մինչդեռ ոչ լրիվ վերաքննության դեպքում վերաքննության նախապատրաստվում է վարույթ ընդունված վերաքննիչ բողոքը, ինչն էլ իր հերթին պայմանավորում է վերաքննության այս տեսակի նախապատրաստական մասի հատուկ խնդիրների առաջադրումը և դրանց լուծմանն ուղղված դատավարական գործողությունների օրենսդրական առանձին կարգավորումը:

Վերը շարադրվածի համատեքստում ատենախոսը փաստում է, որ ներկայիս իրավակարգավորման պայմաններում դատական ակտը վերաքննության նախապատրաստելու գործողություններն ամրագրված են դատավարական օրենքով, քանի որ ՀՀ-ում գործում է ոչ լրիվ վերաքննության ինստիտուտը: Ընդ որում, վերաքննիչ վարույթի նախապատրաստական մասի նկատմամբ ՔԴՕ 217-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով կիրառելի է վարույթ ընդունված վճռաբեկ բողոքը գործի քննությանը նախապատրաստելու կարգն այն բացառություններով, որոնք նախատեսված են վերաքննության հատուկ նորմերով:

Անդրադառնալով վճռաբեկ վարույթի նախապատրաստական մասի հատուկ խնդիրներին՝ ատենախոսը փաստում է, որ այդ խնդիրների շրջանակը որոշակիորեն պայմանավորված է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերով: Որպես նշված տեսակետի հիմնավորում՝ հեղինակն առաջադրում է վճռաբեկ վարույթի նախապատրաստական մասին այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով (գործերով) վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումը պարզելը, բողոքարկվող դատական ակտում վկայակոչված իրավանորմի մեկնաբանության և տվյալ իրավանորմի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի մեկնաբանության միջև հակասության առկայությունը պարզելը, բողոքարկվող դատական ակտում վկայակոչված իրավանորմի մեկնաբանության և տվյալ իրավանորմի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանության միջև հակա-

սության առկայությունը պարզելը:

Հաջորդիվ վերլուծելով ՔԴՕ-ի իրավակարգավորումը՝ հեղինակն առանձնացնում է հետևյալ նախապատրաստական գործողությունները, որոնք պարտադիր են վերաքննիչ և վճարեկ ատյաններում գործի քննությունն իրականացնելու համար՝ վերաքննիչ դատարանի դատական կազմի կամ վճարեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորների կողմից վերաքննիչ կամ վճարեկ բողոքին, բողոքի պատասխանին (եթե այդպիսին ներկայացվել է), գործի նյութերին ծանոթանալը, բողոքի հիմքերն ու հիմնավորումները, ինչպես նաև բողոքի պատասխան ներկայացվելու դեպքում պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումն ու հիմնավորումները պարզելը, բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելը, նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները և գործի էլքի վրա դրանց ազդեցությունը որոշելու համար անհրաժեշտ իրավական նորմերի շրջանակը պարզելը, ինքնաբացարկի հիմքերը ստուգելը, գործին մասնակցող անձանց դատական նիստի վայրի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցելը:

Ըստ հեղինակի՝ դատական ակտերի վերանայման վարույթների նախապատրաստական մասի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն ընդգրկում է բացառապես դատարանի՝ բողոքը վերաքննության կամ վճարեկության նախապատրաստելուն միտված գործողությունները, ինչը պայմանավորված է դատավարության այս փուլերում քաղաքացիական դատավարության այնպիսի սկզբունքների սահմանափակ գործողությամբ, ինչպիսին են՝ տնօրինչականության, մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքները:

Քննարկելով դատական ակտերի վերանայման վարույթներում նախնական դատական նիստ հրավիրելու հարցը՝ հեղինակը հիմնավորում է, որ այդպիսի նիստ կարող է հրավիրվել միայն լրիվ վերաքննության դեպքում: Միաժամանակ վերլուծելով ՔԴՕ- իրավակարգավորումը՝ փաստում է, որ օրենսդիրն ինչպես վերաքննության, այնպես էլ վճարեկության փուլում նախնական դատական նիստ հրավիրելու հնարավորություն չի նախատեսել:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ **«Նախապատրաստական գործողությունները նոր և նոր երևան հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթներում»** վերտառությամբ, քննարկվում են դատական ակտերի վերանայման այս վարույթների նախապատրաստական մասի առանձնահատկությունները:

Հեղինակը հիմնավորում է, որ ներկայիս իրավակարգավորման պայմաններում նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում բողոքի քննության նախապատրաստումը ևս վերաքննիչ վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ իրականացվում է վճարեկ դատարանում գործի քննության կանոններով (բողոքին, բողոքի պատասխանին /եթե այդպիսին ներկայացվել է/, գործի նյութերին ծանոթանալ, բողոքի հիմքերն ու հիմնավորումները, ինչպես նաև բողոքի պատասխան ներկայացվելու դեպքում պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումն ու հիմնավորումները պարզել, գործին մասնակցող անձանց դատական նիստին կանչելու հարցը լուծել և նախա-

պատրաստական բնույթի այլ գործողություններ), սակայն որոշակի վերապահումներով: Ըստ ատենախոսի՝ վերանայման այս վարույթների առանձնահատկությունը, այն է՝ բողոքարկման հիմքերի բացառիկությունը, պայմանավորել է նախապատրաստական մասի այնպիսի հատուկ խնդրի առաջադրումը, ինչպիսին նոր երևան եկած կամ նոր հանգամանքի առկայությունը ստուգելն է:

Հեղինակը նաև հիմնավորում է, որ վերանայման այս վարույթներում նախապատրաստական գործողությունների ծավալը ևս պայմանավորված է բողոքարկման հիմքով: Ըստ այդմ, դատական ակտը վերանայելուն նախապատրաստելուն ուղղված գործողություններն ամենաձավալունն են և իրենց բնույթով որոշակի ընդհանրություններ ունեն նաև առաջին ատյանում գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների հետ այն դեպքում, երբ բողոքը բերվել է ՀՀ ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով:

Անդրադառնալով ՔԴՕ 204.32-րդ հոդվածի մյուս կետերում, ինչպես նաև ՔԴՕ 204.33-րդ հոդվածում («Նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը» վերտառությամբ) ամրագրված հիմքերով դատական ակտը վերանայելուն նախապատրաստելուն ուղղված գործողություններին՝ ատենախոսը փաստում է, որ այս հիմքերը հաստատվում են իրավասու մարմինների ակտերով (դատավճիռ, ՀՀ սահմանադրական դատարանի որոշում, ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի որոշում կամ վճիռ), հետևաբար այս հիմքերով դատական ակտերի վերանայման վարույթ հարուցված լինելու դեպքում նախապատրաստական գործողությունները, ի տարբերություն ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքի, ծավալուն չեն և ներառում են միայն այն գործողությունները, որոնք նախատեսված են վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման վարույթի նախապատրաստական մասում՝ վերաքննիչ վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ:

Եզրակացությունում վերաիմաստավորելով և վերաարժևորելով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի էությանը, նպատակին և խնդիրներին, գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողություններին, ինչպես նաև նախնական դատական նիստի ինստիտուտին վերաբերող հարցերը, քաղաքացիական դատավարության այս փուլին առնչվող տեսական և գործնական մի շարք խնդիրներ կարգավորելու նպատակով կատարվել են ***հետևյալ հիմնական եզրահանգումները և առաջարկությունները***.

1. Հայաստանի քաղաքացիական դատավարությունում գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը պատմականորեն ձևավորված կատեգորիա է, որի զարգացման ընթացքը պայմանականորեն կարող ենք բաժանել երեք հիմնական՝ ձևավորման, կայացման, արդի փուլերի: Եթե առաջին փուլում կարող ենք առանձնացնել գործը դատաքննության նախապատրաստելու միայն առանձին տարրեր, որոնք հիմնականում ուղղված էին գործի ժամանակին քննության ապահովմանը, ապա այս ինստիտուտի զարգացման հաջորդ փուլում, օրենսդրորեն ամրագրվելով որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն և պարտադիր փուլ, այն առավելապես ուղղված էր դատարանի կողմից գործի քննության հետ կապված կազմակերպչական հարցերի լուծմանը, իսկ արդեն

երրորդ փուլում ՀՀ քաղաքացիական դատավարության համակարգ միջազգային իրավական նոր նորմերի և չափանիշների ներդրմամբ պայմանավորված գործը դատաքննության նախապատրաստելու փուլը կարող ենք դիտարկել որպես անձի դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրականացման և արդարադատության իրավաչափության, դատական ակտերի կայունության ապահովման իրավական երաշխիք:

2. Հայաստանի քաղաքացիական դատավարությունում գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողություններ իրականացվել են դեռևս միջնադարից՝ շարունակական զարգացում և օրենսդրական ամրագրում ստանալով հետագա ժամանակաշրջաններում, և չնայած այն հանգամանքին, որ 17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին գործողության մեջ դրված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն առանձին գլխով չէր իրականացրել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի իրավակարգավորումը, օրենսդրական տեխնիկայի նման մոտեցումն ամենևին չի նշանակում, որ գործող դատավարական օրենսգրքի ընդունման և մոտ 10 տարվա կիրառության ժամանակահատվածում գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողություններ նախատեսված չեն եղել դատավարական օրենքով և չեն իրականացվել դատական պրակտիկայում:

3. Արդար դատաքննության իրավունքի լիարժեք իրականացման տեսանկյունից անհրաժեշտ է ՔԴՕ-ում գործերի քննության ողջամիտ ժամկետի ապահովման իրավական երաշխիքներ սահմանել, որոնք կներառեն նաև գործը դատաքննության նախապատրաստելու, այդ թվում նաև՝ նախնական դատական նիստ հրավիրելու և դրա անցկացման հստակ ժամկետներ:

4. ՔԴՕ-ում գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների իրավակարգավորումը թույլ է տալիս գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը դիտարկել գործառութային (ֆունկցիոնալ) և տրամաբանական առումներով:

Գործառութային առումով որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլ՝ գործը դատաքննության նախապատրաստելն արդարադատության արդյունավետության, անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացման համար պայմաններ ապահովող դատավարական գործողությունների և դրանց հետևանքով առաջացող իրավահարաբերությունների համակարգ է:

Զուտ տրամաբանական առումով այն պետք է դիտարկել դատական ակտերի վերանայման վարույթներում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների քննության և վերանայման ենթակա դատական ակտերի իրավաչափության արդյունավետ ստուգումն իրականացնելուն ուղղված նախապատրաստական գործողությունների միասնական ամբողջություն:

ՔԴՕ-ում անհրաժեշտ է նախատեսել, որ գործը դատաքննության նախապատրաստելը՝ որպես գործառութային փուլ, պարտադիր է բոլոր քաղաքացիական գործերով: Հատուկ վարույթի կարգով քննվող գործերը ևս նախապատրաստվում են դատաքննության, սակայն գործը դատաքննության նախապատրաստելու

կանոնները վարույթի այս տեսակում, պայմանավորված վերջինիս առանձնահատկություններով, գործում են սահմանափակ ծավալով: Մասնավորապես, գործը դատաքննության նախապատրաստելու փուլի որոշ խնդիրներ (օրինակ՝ կողմերին հաշտության հանգեցնելու) և գործողություններ (օրինակ՝ ապացուցման պարտականությունը բաշխելու) հաստի վարույթի կարգով քննվող գործերը դատաքննության նախապատրաստելիս չեն իրականացվում, իսկ նախնական դատական նիստ կարող է հրավիրվել միայն ըստ անհրաժեշտության:

5. Գործը դատաքննության է նախապատրաստվում դրա արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով, ինչը բխում է արդար դատաքննության իրավունքի բովանդակությունից և ենթադրում է ողջամիտ ժամկետում գործի քննության, օրինական և հիմնավորված դատական ակտի կայացման, դատական խնայողության ապահովում:

6. Անհրաժեշտ է ՔԴՕ-ում առանձին հոդվածով ամրագրել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրները: Մասնավորապես՝ «Գործը դատաքննության նախապատրաստվում է քաղաքացիական գործով վարույթի ընթացքն արգելակող հանգամանքները ստուգելու, վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը որոշելու, գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը ճշտելու և նրանց մասնակցությունն ապահովելու, գործի ըստ էության լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները որոշելու, ապացույցների կենտրոնացման, կողմերին հաշտության հանգեցնելու խնդիրների իրականացման համար»:

7. Քաղաքացիական դատավարության մրցակցային բնույթով պայմանավորված՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի բովանդակությունը կազմում են ինչպես դատարանի, այնպես էլ գործին մասնակցող անձանց դատավարական գործողությունները, հետևաբար առաջարկվում է ՔԴՕ 149⁵ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով դատարանը կողմերի և գործին մասնակցող այլ անձանց մասնակցությամբ գործը նախապատրաստում է դատաքննության»:

8. ՀՀ քաղաքացիական դատավարական օրենսդրությունը թույլ է տալիս գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունները դասակարգել նախնական դատական նիստում իրականացվող գործողությունների և նախնական դատական նիստից դուրս իրականացվող գործողությունների: Գործը դատաքննության նախապատրաստելու փուլում բացառապես նախնական դատական նիստում է դատարանը կողմերին պարզաբանում նրանց իրավունքները և պարտականությունները, դատավարական գործողություններ կատարելու կամ չկատարելու հետևանքները, քննարկում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան՝ կողմերի միջև բաշխում ապացուցման պարտականությունը, ինչպես նաև սահմանում ապացույցներ ներկայացնելու ժամկետները, քննարկում ապացույցը պահանջելու վերաբերյալ միջնորդությունը, լուծում փորձաքննություն նշանակելու, դատական նիստին փորձագետներ, վկաներ կանչելու, գործի

քննությանը այլ անձանց ներգրավելու, ոչ պատշաճ կողմին փոխարինելու, մի քանի պահանջների միացման և առանձնացման, արտագնա դատաքննության անցկացման հնարավորության հարցերը, որոշում ապացույցների հետազոտման կարգը:

Դատական խնայողության սկզբունքի ապահովման նպատակով նախնական դատական նիստում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը քննարկելիս դատարանը պետք է պարզի հանրահայտ, նախադատելի և անվիճելի փաստերի առկայությունը:

Ապացուցման առարկան որոշելու և ապացուցման բեռը գործին մասնակցող անձանց միջև բաշխելու վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է ձևակերպվեն առանձին դատական որոշմամբ, որը ենթակա չէ բողոքարկման:

9. Գործը պատշաճ կերպով դատաքննության նախապատրաստելու անհրաժեշտությամբ պայմանավորված որոշ դատավարական իրավունքների, մասնավորապես՝ հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հակընդդեմ հայց հարուցելու իրավունքների իրացման հնարավորությունը պետք է սահմանափակել դատավարության այս փուլի շրջանակներով:

10. Իրավակարգավորման ներկայիս պայմաններում նախնական դատական նիստը գործը դատաքննության նախապատրաստելու այնպիսի իրավական կառուցակարգ է, որն ապահովում է դատավարության մասնակիցների անմիջական ներգրավվածությամբ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի հիմնական խնդիրների լուծումը, գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների զգալի մասի իրականացումը:

11. Որպես գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիր պետք է դիտարկել քաղաքացիական դատավարությունը բացառող կամ արգելակող հանգամանքները պարզելը, հետևաբար անհրաժեշտ է ՔԴՕ-ում նախատեսել դրույթ, ըստ որի՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու և գործի վարույթի կարճման՝ օրենքով սահմանված հիմքերից յուրաքանչյուրի առկայության դեպքում դատարանը համապատասխանաբար հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության կամ կարճում է գործի վարույթը:

12. Իրավակարգավորման ներկայիս պայմաններում դատական ակտերի վերանայման վարույթներում պայմանականորեն կարող ենք առանձնացնել այդ վարույթների նախապատրաստական մասը՝ այն տրամաբանական առումով դիտարկելով որպես բողոքների քննության և վերանայման ենթակա դատական ակտերի իրավաչափության արդյունավետ ստուգումն իրականացնելուն ուղղված համասեռ դատավարական գործողությունների միասնական ամբողջություն: Բողոքը վերաքննության կամ վճռաբեկության նախապատրաստելուն միտված դատավարական գործողությունների կատարումն ուղղակիորեն նախատեսված է դատավարության օրենքով, բխում է դրա բովանդակությունից, ուղղված է բողոքի ճիշտ և արդյունավետ քննության, ինչպես նաև գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքների ապահովմանը:

13. Առաջարկվում է կանոնակարգել վերադաս (վերաքննիչ կամ վճռա-

բեկ) դատարանի կողմից բեկանված մասով գործն առաջին աստիճանի դատարան նոր քննության ուղարկելու դեպքում գործը դատաքննության նախապատրաստելու ընթացակարգը: Մասնավորապես, անհրաժեշտ է սահմանել, որ առաջին աստիճանի դատարանում բեկանված մասով գործի նոր քննության ընթացքում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործողությունները պետք է իրականացվեն վերադաս դատական աստիճանի կողմից գործի փաստական և իրավական հանգամանքների վերաբերյալ արտահայտած դիրքորոշման շրջանակներում՝ բացառելով նոր ապացույց ներկայացնելու հնարավորությունը, եթե դա պայմանավորված չէ դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելիս նոր փաստ ապացուցելու անհրաժեշտությամբ՝ միաժամանակ սահմանափակելով նաև հայցի առարկան կամ հիմքը փոխելու և հակընդդեմ հայց հարուցելու հնարավորությունը:

14. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի բողոքարկման հիմքերի բացառիկությամբ պայմանավորված՝ որպես վերանայման այս վարույթների նախապատրաստական մասի հատուկ խնդիր պետք է դիտել նոր երևան եկած կամ նոր հանգամանքի առկայությունը ստուգելը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. «Դատական ակտը վերաքննության կարգով վերանայելուն նախապատրաստելու հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» // Արդարադատություն, Եր., 2013, թիվ 3 (22), էջ 53-60:

2. «Գործը դատաքննության նախապատրաստելու փուլի վերականգնման նախադրյալները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» // «Դատական իշխանություն», Եր., 2013, թիվ 8/169, էջ 45-53:

3. «Նախնական դատական նիստի հասկացության տեսական հիմնախնդիրները և իրավական կարգավորման առանձնահատկությունները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» // Պետություն և իրավունք, Եր., 2013, թիվ 4 (62), էջ 59-64:

4. «Քաղաքացիական գործի վարույթի ավարտը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում» // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., 2014, էջ 181-190:

5. «Գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների իրավակարգավորման հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» // «Դատական իշխանություն», Եր., 2014, թիվ 10/184, 50-55:

РЕЗЮМЕ
КАРСЛЯН АШХЕН РУБЕНОВНА

**ПОДГОТОВКА ДЕЛА К СУДЕБНОМУ РАЗБИРАТЕЛЬСТВУ КАК СТАДИЯ
ГРАЖДАНСКОГО ПРОЦЕССА**

Диссертационная работа на соискание ученой степени кандидата юридических наук посвящена всестороннему изучению и анализу проблем стадии подготовки дела к судебному разбирательству.

Некоторые основные вопросы института подготовки дела к судебному разбирательству, находясь в центре внимания процессуалистов, становились предметом исследования как в научных работах авторов царской России, так и в работах авторов советского периода и современности.

Тем не менее, необходимо отметить, что в Армении институт подготовки дела к судебному разбирательству пока еще не исследован, и всеобъемлющие научные работы по данной тематике отсутствуют. Это обусловлено той действительностью, что сегодняшний механизм подготовки дела к судебному разбирательству, внедренный в гражданский процесс с 2007 года, достаточно своеобразен и отличается как от ранее существовавших, так и от идентичных институтов процессуального законодательства современных государств. Тем не менее, изучение правоприменительной практики, сформулированной последними изменениями, свидетельствует о том, что имеющееся правовое регулирование стадии подготовки дела к судебному разбирательству нельзя считать удавшимся, пока, с одной стороны, формулировки некоторых положений дают повод для разнохарактерных толкований, а с другой стороны, решение ряда принципиальных вопросов осталось вне поля зрения законодателя.

Целью настоящего исследования является комплексное изучение теоретических и практических задач стадии подготовки дела к судебному разбирательству, и разработка на его основе рекомендаций по совершенствованию законодательства и правоприменительной практики.

Анализируя современное правовое регулирование института подготовки дела к судебному разбирательству и гражданский процессуальный кодекс РА, автор обосновал, что ГПК в момент его принятия отдельной главой не осуществлял правовое регулирование подготовки дела к судебному разбирательству, однако не смотря на это в период принятия действующего процессуального кодекса и десятилетнего его применения, действия, направленные на подготовку дела к судебному разбирательству были предусмотрены процессуальным законом и осуществлялись в судебной практике. Другое дело, что данная стадия судопроизводства, обусловленная внедрением в армянскую судебную систему новых международных правовых стандартов, в результате изменений и дополнений ГПК в 2007-ом году подверглась основательно новому правовому регулированию. Анализируя роль стадии подготовки дела к судебному

разбирательству в осуществлении прав лица на судебную защиту и справедливого судебного разбирательства, диссертант обосновал, что современное правовое регулирование данной стадии исходит из вышеупомянутых прав лица и направлено на обеспечение их полной и эффективной реализации.

Автор работы, обсуждая основные точки зрения в юридической литературе, обосновал, что подготовка дела к судебному разбирательству в гражданском процессе является самостоятельной и обязательной стадией. В то же время диссертант подчеркнул необходимость подготовительных действий также в производствах по пересмотру судебных актов.

Рассматривая содержание стадии подготовки дела к судопроизводству, автор считает, что в условиях нынешнего правового регулирования содержанием данной стадии гражданского процесса составляют как действия суда, так и действия лиц участвующих в деле. В то же время автор предлагает определенные критерии, по которым действия, направленные на подготовку дела к судебному разбирательству, могут быть классифицированы.

В работе особое внимание уделено предварительному судебному заседанию, как новому институту в гражданском процессе. В диссертации дано определение понимания предварительного судебного заседания, рассмотрена необходимость ограничения усмотрения судов проводить предварительное заседание по делам искового производства. Автор обосновал также необходимость проведения более одного предварительного судебного заседания.

Со стороны диссертанта также подробно изучен вопрос завершения производства по делу на стадии подготовки дела к судопроизводству.

В настоящей работе внимание обращено также вопросам законодательного регулирования предварительных действий в производствах по пересмотру судебных актов. По мнению автора особенность предварительной части производства по пересмотру судебных актов состоит в том, что действия относительно подготовки апелляционных и кассационных жалоб осуществляются исключительно судом. Это обусловлено ограниченными действиями на этих стадиях производства таких принципов судебного процесса, как принципы диспозитивности, состязательности и равенства сторон.

Рассматривая вопрос проведения предварительного судебного заседания в производствах по пересмотру судебных актов, автор обосновал, что такое заседание может проводиться только в случае полного пересмотра. Одновременно анализируя правовое регулирование гражданского процессуального кодекса РФ, автор указал, что законодатель не предусмотрел возможность проведения предварительного судебного заседания ни на стадии апелляции, ни на стадии кассации.

В результате исследований автор пришел не только к теоретическим выводам, но и представил рекомендации, которые однозначно повысят практическое значение и эффективность института подготовки дела к судебному разбирательству.

Summary
ASHKHEN RUBEN GHARSLYAN

PREPARATION OF A CASE FOR A TRIAL AS A STAGE OF CIVIL PROCESS

The given dissertation is dedicated to the comprehensive research and analysis of the issues of the preparation stage of a case.

Certain issues of the institute of preparation of a case for a trial are permanently at the center of interest of specialists of court procedure. These issues have been analyzed in the Russian Empire authors', as well as by the Soviet and modern authors' works. Moreover, the issues of the given analysis have been discussed also in dissertations.

However, it's a fact, that the institute of preparation of a case for a trial has not been studied yet in Armenia and there is no comprehensive scientific work on this institute. The explanation of such a situation is that the today's mechanism of preparation of a case for a trial, which was invested in the civil procedure since 2007, is a special one and differs from the former mechanisms, as well as from the analogue institutes in the procedural legislation of other states.

However, the study of the law-enforcement practice, formulated even on the basis of the recent changes, indicates, that the existing regulation of the preparation stage of a case for a trial cannot be considered as perfect. The formulation of several provisions cause different interpretations, the legislator has not paid due attention to regulation of several principal issues.

The aim of this analysis is the complex study of theoretical and practical issues of the preparation stage of a case and the preparation of suggestions on improvement of legislation and law-enforcement practice.

Discussing the available regulation of the institute of preparation of a case for a trial in the Republic of Armenia and analyzing the RA Code of Civil Procedure, the author arguments, that although there was no separate chapter regulating the institute of preparation of the case for a trial in the RA Code of Civil Code, however, during about 10 years of the implementation, measures aimed to the preparation of a case for a trial have been provided by the procedural law and have been implemented in the judicial practice.

It's an other question, that due to the investment of new international standards into the system of the RA civil procedure, this stage of proceedings obtained new regulation as a result of amendments to the RA Code of Civil Procedure adopted in 2007. The author analyzing the role of the stage of preparation of a case in realization of the

rights to judicial protection and fair trial, arguments, that the available regulation of this stage derives from these rights and is aimed to guarantee of full and efficient realization of these rights.

The author of the dissertation, analyzing the main approaches available in the jurisprudential literature, argues that the preparation of a case for a trial is an independent and compulsory stage in a civil procedure. Meanwhile, the author emphasizes the necessity of the implementation of preparatory measures also in the process of review of judicial acts.

As to the content of the stage of preparation of a case the author considers, that in the situation of the existing regulation the content of this procedural stage are the procedural actions of the court and the participants of the case. The author suggests certain criteria for classification of actions aimed to the preparation of a case for a trial.

The author has paid special attention to a preliminary judicial session, which is a new institute in the civil procedure. The author has formulated the notion of preliminary judicial session, has emphasized the necessity of restriction of court's discretion while deciding to convene such a session. The author argues also the necessity of convening more than one preliminary judicial session.

The author has thoroughly studied also the issues of accomplishing the civil proceedings at the stage of preparation of a case.

The author has discussed the issues of legislative regulation of preparatory measures also in the process of review of judicial acts. The author considers, that the feature of the preparatory stage of review proceedings is that this stage includes the actions aimed to preparation of the appeal for appellate or cassation review, which is conditioned with the restrictive action of such principles of civil procedure in these procedural stages, as the principle of disposition, equality of arms and adversary trial.

As to convening a preliminary judicial session in the review proceedings of judicial acts, the author argues that such a session may be convened only in case of full appellate review. Analyzing the regulation provided by the RA Code of Civil Procedure, the author states, that the legislator has not provided by opportunity to convene a preliminary judicial session in appellate, as well as in cassation proceedings.

In the result of the dissertation the author has not only made theoretical conclusions, but also has made suggestions, which will be raise the practical importance and efficiency of the institute of a preparation of a case for a trial.